

Ակերտե Զիվելեգով – Թուրքիան և Հայկական հարցը, կազմ. Է. Մինասյանը, Եր., ԵՊՀ հրատ., 2014, 320 էջ

Չնայած այն հանգամանքին, որ ընթերցասեր լայն հասարակությանը, այդ թվում նաև սովորական հեղինակին, նշանավոր պատմաբան Ակերտե Կարապետի (Կարպի) Զիվելեգովը (1875-1952 թթ.) հայտնի էր որպես իտալական վերածննդի՝ խորհրդային և համաշխարհային դպրոցների ամենանշանավոր մասամբ գետներից մեկը, այսուհանդերձ նա նաև մեծ գործ է կատարել նաև Հայկական հարցի ուսումնասիրության բնագավառում : Միայն 1980-ական թթ. վերջերից սկսեցին գործորեն ու երկշուր գրել նաև Զիվելեգովի՝ Հայկական հարցին վերաբերող առանձին աշխատությունների վերաբերյալ⁷: Այս կապակցությամբ ծագում է մեկ օրինաչափ հարց. ինչով են տարրերում Զիվելեգովի՝ Հայկական հարցին վերաբերող ուսումնասիրությունները այլոց շարադրած գործերից: Արածին հերթին պեսոք է արծանագրել, որ դրանք իմնականում գրվել են տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին համարյա թե գուգահեռ (դրանցից մի փոքր առաջ կամ անմիջապես հետո): Յուրաքանչյուրին պարզ է, որ դա շարադրանքի ամենադժվար տարրերակներից է, քանզի ցանկացած իրադարձությանն ավելի հեշտ և դյուրին անդրադառնալ տարիների, իսկ առավել ևս հարյուրամյակների «քարձունքից»: Սա իր հերթին նշանակում է, որ հեղինակը դրանք շարադրել է որպես ականատես, որոնք, ըստ էության, ունեն արխիվային փաստաթղթերի կամ սկզբնադրյուրի նշանակություն:

Ուշադրության արժանի մյուս կարևոր հանգամանաքններից է այն, որ դրանք գրվել են Ուսասատանում (ցարական և խորհրդային իշխանությունների օրոք), իսկ վերջինս մյուս մեծ տերությունների հետ՝ Հայկական հարցով գրադարձությունների կողմերից մեկն էր և մնում է այդպիսին նաև ներկայում: Զիվելեգովը մշտապես իրագել էր, թե ինչ է տեղի ունենում այսուելու, քանզի պարբերաբար շիվում էր քաղաքական շրջանակները ներկայացնող բազմաթիվ գործիքների հետ:

Մեր կողմից գրախոսվող աշխատությունում ամփոփված են Հայկական հարցին արնչվող թուրքական քաղաքականության հետ կապված հողվածները: Դրանց մի մասն մինչև այսօր գտնվում էր տարրեր գրադարանների առանձին ֆոնդերում, այսպես կոչված ցար ու ցրիվ կարգավիճակում: Այս ամենի հավաքագրումն ու մեկ աշխատության սահմաններում հրատարակումը արդեն շատ վաղուց դարձել էր օրակարգի հարց, որին էլ ծեռնամուխ եղավ պատմական դիտ. դրկուոր, պրոֆ. Է. Գ. Մինասյանը: Ժողովածուի արարման ճանապարհին, ինչպես նշում է Է. Մինասյանը, մեծ դեր են ու-

* Տե՛ս Ա.Կ. Ջիվելեգով, Средневековые города в Западной Европе СПб., 1902; նույնի՝ Торговля на Западе в средние века, СПб., 1904; նույնի՝ Начало итальянского Возрождения, М., 1908; նույնի՝ Очерки итальянского Возрождения, М., 1929; նշանավոր մարդկանց կյանքը մատենաշարով (ЖЗЛ – Жизнь замечательных людей) նույնի՝ Данте Алиగьери, М., 1933, 1946, նույնի՝ Леонардо Да Винчи М., 1935, նույնի՝ Микеланджело, М., 1938, 1957; նույնի՝ Итальянская народная комедия, М., 1954: Նա նաև գրել է աշխատություններ 1812թ. Հայրենական պատերազմի և ընդհանրապես Ֆրանսիայի պատմության վերաբերյալ: Տե՛ս Ա.Կ. Ջիվելեգով, Отечественная война и русское общество; նույնի՝ Армия Великой французской революции и ее воходи; նույնի՝ Революция и Европа; Революция и Бонапарт և այլն:

[†] Ն. Սարգսյան, Ակերտե Զիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը, Եր., 2008, Ջ. Հ. Կիրակոսյան, Ալեքսեյ Ջիվելեգով և его историко-публицистическое наследство. Еր., 2007, Է. Ս. Դանիելյան, Избранные статьи по литературе и искусству А.К. Ջիվելեգова, Еր., 2008.

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Անցել նաև Պ.Հ. Հովհաննիսյանը և Ա.Զ. Կիրակոսյանը, ոքեր սիրահոժար տրամադրել են իրենց արխիվներում պահպանված նյութերը:

Հրատարակված փաստաթղթերում լուսաբանվում են ինչպես Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի, այնպես էլ նրանց հաջորդած երիտրուքերի վարած քաղաքականությունը՝ Հայկական հարցի ասպարեզում (նյութերը հիմնականում վերաբերում են 1900-1920-ական թթ.): Այս տարիներին էր, որ Հայկական հարցը վերածվել էր միջազգային դիվանագիտության ամենաչարչարկված խնդիրներից մեկի: Այս այսօր էլ, մաթենատիկական բառապաշտիքի բնութագրումով, մնացել է որպես անլուծելի խնդիր:

Զիվելեգովի կողմից գրված հոդված-ուսումնասիրությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ հայերենով գրված գործեր, որոնք ստպագրվել են, Արարատե հանդեսում: Երկրորդ՝ ռուսերենով հոդվածներ, որոնք հրատարակվել են մի շարք հայտնի ժողովածուներում, այդ թվում հանրագիտարաններում և «Արմանակ» ամսագրություններում («Հայկական լրաբեր») հանդեսում: Այս ստպարածավալ մենագրության կազման ընթացքում աշխատափող է. Գ. Մինասյանի կողմից իրավացիորեն նախ տրվել են հայալեզու (էջ 44-66), իսկ ապա՝ ռուսերենով գրված տեքստերը (էջ 67-299): Իր կողմից գրված կենսագրականում (էջ 5-16) և Զիվելեգովի՝ Հայկական հարցին վերաբերող աշխատությունների ընդարձակ Ներածական հատվածում (էջ 17-43) է. Գ. Մինասյանը կանգ է առել, թե ինչպիսի մեծ և անգնահատելի նշանակություն ունեցան այս հրապարակումներն հենց իրենց՝ այդ նույն օրերին դեգերումների մեջ գտնված հայության համար: Դժբախտաբար, այն ժամանակի մեծ տերություններից շատերը (Անգլիա, ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա) այս հարցի հանդեպ ունեին իրենց սեփական և տարբերակված մոտեցումները: Տերությունները տպիչս էին միայն սին խոստումներ, իսկ գործնական և ոչ մի աջակցություն տեղի չունեցավ: Նրանք չաջակցեցին ինչպես Հայաստանի առաջին հանրապետությանը, այնպես էլ, առավել ևս Խորհրդայինին: Մենք այստեղ նպատակ չունենք քննարկելու այս հիմնահարցի բոլոր ոլորապտույտները, որոնք շատ թե քիչ հայտնի են բոլորին, գոնե դասագրքային գիտելիքների մակարդակով:

Զիվելեգովի հետազոտության կիզակետում էր Ուսասատանի ռազմաքաղաքական և դիվանագիտական վերաբերմունքի լուսաբանումը՝ Հայկական հարցի հանգուցալուծման բնագավառում: Նա դիպուկ գնահատում է ոչ միայն Ս.Շ. Սագոնովի խաղացած դերն այդ ասպարեզում, այլև «Հայերը Ուսասատանում» հոդվածում տպիչս է, թե ինչպիսի կարևոր դերակատարություն են նրանք ունեցել հայոց պետականության և հայ ժողովրդի կանքում: Այս տեսանկյունից ուշագրավ է նաև «Ուսական հեղափոխությունը և հայերը» հոդվածը, որտեղ հեղինակը նշում է, թե ինչ պետք է այն տար, քայլ իրականում չտվեց հայերին՝ Հայկական հարցի լուծման քառուղիներում: Դա այսպես կոչված՝ Հայաստանին ինքնավարության տրամադրումն էր, որն ընդունված է հորդողքն նաև որպես «Թուրքահայաստանի դեկրետ» անվամբ:

Ուսասատանից զատ՝ նա իր պրատումների ասպարզում մեծ տեղ է հատկացրել նաև ԱՄՆ-ի ունեցած դերին, հատկապես նրանց նախագահ Վ. Վիլսոնի վարած անհմաստ քաղաքականությամբ: Վերջինիս, ինչպես նաև Քայլակի մուս առաջնորդների համար գործում էր մի սկզբունք, որը գալիս էր դեռևս հռոմեական ժամանակներից՝ «քուղաք չի կարմորում – charta non erubescit»: Թե ինչ էր նշանակում այս ասացվածքը, երկի պարզ է բոլորին՝ թղթի վրա կարելի է գրել ամեն ինչ, որից վերջինս երբեք չի կարող ամաչել: Միջազգային դիվանագիտության հետ առնչվող նրա հոդվածներից մենք ցանկանում ենք առանձնացնել նաև Ստոկհոլմի կոնֆերանսին վերաբերող գործը (տե-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ոյի է ունեցել 1917 թ. ամռանը), որի որոշումները հետագոտողը որակում է «որպես» *coup de grace*՝ նահացու հարված և որից հետո այլև հնարավոր չեր ուշքի զալ:

Այս ամենի պատասխանը հանդիսացավ 1946 թ. փետրվարի 20-ին Զիվելեգովի կողմից կարդացած դասախոսությունը «Հայաստանը և Թուրքիան» անվամբ, որտեղ տրված է հայ ժողովրդի անցած պատմական ուղու համարու նկարագիրը: Հեղինակի խնդիրն էր ապացուցել բոլորին, որ վեր է հարնում մի նոր Հայաստան՝ չնայած բոլոր այն փորձությունների, որով անցել էր մեր ժողովուրդը; Ելույթից կարելի է անել միայն մեկ հետևություն. դա հաղթանակած մարդու պատասխանն էր՝ ուղղված արևմուտքի դավադիր դեկավարությանն ու նրանց կամակատար դիվանագետներին: Այս հոդվածը պետք է դաս և ուղեցույց լինի մերօրյա հայ դիվանագետների համար, որպեսզի երբեք անվերապահորեն չհավատան իրենց տրված բոլոր խոստումներին: Դիվանագիտության ետնախորքում մշտապես եղել և մնում են պետական շահերը (ինչպես, օրինակ, նավթը, որը բարեբախտաբար մեր հարևանների մոտ շուտով վերջնականապես կսպառվի): Լրագոյն գգուշավորություն, որքան էլ թվա զարմանալի, ուեր 150 տարի առաջ ցուցաբերում էր մեծն Հ. Պարոնյանը, որը 1877թ. մեծ տերությունների մասին՝ կապված Հայկական հարցի հետ, հումորով գրում էր. «...Կոնֆերանս արեցինք, կոնֆերանսի մեջ ոչինչ չարեցինք...»:

Երբ հետևում ենք Զիվելեգովի գիտական գործունեության շրջանակներին, ապա տեսնում ենք, որ 1920-ական թթ. կեսերից նրա մոտ տեղի է ունենում կտրուկ շրջադարձ: Նա լիովին իրեն «Նվիրում» է իտալական վերածննդին: Սա ամենահին էլ չի նշանակում, որ նրա մոտ հայասիրությունն ու հայաստանասիրությունն իրեն սպառել էր: Նրա կյանքի վերջին 30 տարիների գործերը կարելի է փոխաբերական իմաստով անվանել բրդարկված հայասիրական աշխատանքներ: Պարզաբանենք այս միտքը: 1920-ական թթ. կեսրից մինչև Զիվելեգովի վախճանն ընկած շրջանը ԽՍՀՄ-ում իշխում էր ստալինյան բռնատիրությունը: Նա կամ պետք է քամելենի նման փոխեր իր գոյնը՝ հարմարվեր ժամանակին, գրեք կեղծիքներով շաղախված աշխատություններ, որոնք այսօր չեն ունենաւ և ոչ մի արժեք, կամ պետք է հրաժարվեր իր նախասիրություններից ու սկզբունքներից: Նշանավոր հետազոտողը իրավացիորեն ընտրեց վերջին՝ ճիշտ և միակ ուղին: Վերածննդին վերաբերող իր աշխատություններում նա ապացուցում էր, որ աշխարհի ամենամեծ հարստությունը մարդն է, ինչպիսին նա կա և գոյություն ունի: ԽՍՀՄ-ում այս կապակցությամբ նշում էին, որ «մարդը՝ ամենակարևոր կապիտալն է և հարստությունը», սակայն դեպքերի զարգացումն այլ բան էր ցոյց տալիս: ԽՍՀՄ-ում, իսկ առավել ևս թուրքիայում, նա չուներ և ոչ մի արժեք: Թուրքիայում այս «արավել ևս-ը» այն իմաստ ուներ, որ այստեղի հայը ներակա էր նաև կրոնական հայածանների: Ահա այս հանգամանքների բերումով էր պայմանավորված, որ Զիվելեգով պետք է հրաժարվեր Հայկական հարցից և իտալական վերածննդի տեսադաշտից քննարկեր, թե ինչպիսին է մարդու արժեքն ու դերը՝ պատմության մեջ:

Վերիիշյալ թվականներին գրվեցին մի շարք աշխատություններ և պաշտպանվեցին ատենախոսություններ, որոնք համապատասխանում էին ժամանակի շնչին, ոգուն և պահանջներին: Մենք չենք ցանկանում անդրադառնալի, թե ինչպիսի գիտական արժեք ունեին այդ գործերը, ովքեր էին դրանց հեղինակները, սակայն չենք կարող չիշատակել պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի անունը (1929-1985 թթ.): 1960-1980-ականներին նա հրատարակեց մի շարք հանդուզն և համարձակ աշխատություններ՝ «Ճեռնոց» նետե-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

լով գոյություն ունեցած իրավիճակին ^{*}: Բնական է, որ նրա աշխատություններն անցնում էին խմբագրումների և սրբագրումների դժվարին ձանապարհներով, որի ընթացքում հրատարակությունների աչալուրջ և «ուշիմ» աշխատակիցները հանում էին առավել՝ «Վտանգավոր և պայթյունավտանգ» հատվածները: Սակայն նրա ուսումնասիրությունները եղել և մնում են այն ժամանակների և ներկայիս օրերի ամենակարևոր գործերից մեկը, եթե ոչ ամենակարևորը: Այդ շարքի այսօր լրացնելու են գալիս է. Գ. Մինասյանի կողմից հրատարակված խնդրո առարկա աշխատությունը, ինչպես նաև Լեոյի «Հայոց հարցի վավերագրերը» գործը, որը նույնպես տպագրվեց նրա կողմից տպակավին վերջերս:

Հայոց ցեղասպանության և Մեծ Եղեռնի 100-ամյակի նախօրերին այս աշխատությունների հրատարակումը պետք է համարել հայրենանվեր գործ, քանզի Լեոյի աշխատության առաջին տպագրումից անցել էր ուղիղ մեկ դար, իսկ Ա.Կ. Զիվելեգովի հոդվածները վերջապես ամփոփվեցին մեկ մենագրության շրջանակներում:

Հակոբ Հարությունյան
ԵՊՀ Համաշխարհային պատմության
ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

* Այս կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս Զ.Ս. Կիրակոսյան, Արաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր. 1971, նույնի Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր. 1972, նույնի՝ Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, հ. 1. 2, Եր. 1978-1980, նույնի՝ Երիտրութերը պատմության դատաստանի առաջ, հ. 1, 2, Եր. 1982, 1983: Վերևում արդեն մեր կողմից հիշատակվեց նաև Ա.Կ. Զիվելեգովի գիտական ժառանգությանը նվիրված՝ Զ.Ս. Կիրակոսյանի մենագրության մասին: Պետք է անպայման նշել, որ այս աշխատությունների մեջ մասն հրատարակվեցին նաև ռուսերեն, որը իսկապես ցնցող երևոյթ էր այն ժամանակների համար: